


Խ. Ս. Հ. Մ. Ֆինանսական
ԳՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԳԻՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

ԿՅԱՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱ-
ԳԻՐՈՒԹՅԱՆ ԴԺԲԱԽՏ ԴԵՊԲԵՐԻՑ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԵՍՀ ՊԵՏԱԳԻ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Օ Է Բ Ե Վ Ա Ն

1937 թ.

Քարգմանեց Լ. Մ. ԱՎԱԳՅԱՆ

Պատ. խմբագիր Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

05 FEB 2018

Հ. Խ. Ս. Հ. ԳԻՆԺՈՂԿՈՍՄԱՏ

ՊԵՏԱԿԱՆ ԸՊԵՆՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԼԻՍԿԱԲ
ՎԵՐՁՈՒԹՅՈՒՆ

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ԿՅԱՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԺԲԱԽՏ ԴԵՊԲԵՐԻՑ

§ 1. Ապահովագրության ընդունվում են 16-ից մինչև 70 տարեկան հասակ ունեցող անձինք առանց բժշկական զննության:

§ 2. Ապահովագրության չեն ընդունվում՝ եպիլեպտիկները, հոգեկան հիվանդները, և այն անձինք, վորոնք տառապում են խրոնիկական հարբեցողությամբ կամ կորցրել են աշխատունակությունը 50-ից ավելի տոկոսով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ցեթե ապահովագրությունը կնքվում է հիմնարկի կամ ձեռնարկության հաշվին, ապա

Կիրովականի տպարան

Գլավիտի լեզուր № Մ—2609

Պատվեր № 610

ապահովագրութեան ընդունվում են տվյալ կազմակերպութեան (կամ առանձին ցեխի, խմբի) այն բոլոր աշխատողները, վերոնք Պետապի պատասխանատվութեան սկզբի որը հիվանդութեան պատճառով արձակուրդում չեն գտնվում:

§ 3. Ապահովագրութեանը կնքվում է վոչ ավելի քան մեկ տարի ժամանակով և ուզած գումարով, բայց 1000 ո. վոչ պակաս մեկ անձին:

§ 4. Ապահովագրութեանը ձևեակերպվում է ապահովագրվող անձի գրավոր դիմումի հիման վրա: Այդ դիմումի մեջ ապահովագրվողը պարտավոր է ճիշտ պատասխաններ տալ գրավոր ձևով առաջադրված հարցերին և ցույց տալ, թե ում է նա նշանակում իր մահվան դեպքում ապահովագրական գումարն ստանալու համար:

§ 5. Պետապը վճարում է ամբողջ ապահովագրական գումարը և հետագա ապահովագրութեանը դադարեցվում է, յե-

թե ապահովագրվողը դժբախտ դեպքից մահանում է կամ լրիվ մշտական հաշմանդամ է դառնում: Մասնակի կերպով մշտական հաշմանդամ դառնալու դեպքում ապահովագրական գումարը վճարվում է այն չափով, վոք չափով (տոկոսով) անաշխատունակութեանը և ընդմիջտ կորած և ապահովագրութեանը մնում է ուժի մեջ մինչև ապահովագրութեան վկայականում ցույց տրված ժամկետի վերջը, բայց ապահովագրական գումարի չափը պակասեցվում է ապահովագրվողին վճարված գումարով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Պետապը պատասխանատվութեանը կրում է միմիայն ապահովագրվողի այն ընդհանուր աշխատունակութեանը մշտապես կորցնելու համար, վոքը նա ունեցել է դժբախտ դեպք տեղի ունենալու պահին: Պրոֆեսիոնալ աշխատունակութեանը կորցնելու համար Պետապը պատասխանատվութեանը չի կրում:

§ 6. Պետապն ապահովագրական գումար չի վճարում, յեթե մահը կամ մշտա-

կան հաշմանդամությունը տեղի յե ունենում. —

ա) զանազան հիվանդությունից և դրանց հետեանքներից, թեկուզ և տեղի ունեցած լինեն ապահովագրվողի իր պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ.

բ) ինքնասպանությունից կամ ինքնասնության փորձից.

գ) ապահովագրվողի կողմից հանցագործության կամ հանցագործության փորձ կատարելուց.

դ) ապահովագրական գումար ստանալու համար նշանակված անձի զիտավորության կամ կուպիտ անդգուշության հետեւիանքով:

Բացի այդ, Պետապը ապահովագրական գումար չի վճարում, յեթե դատարանի վորոշմամբ ապահովագրվողի գույքը բռնագրավվում է կամ յեթե ապահովագրվողի մահից հետո դատարանի վորոշմամբ բռնագրավվում է ապահովագրական գումար ստանալու համար նշանակված անձի գույքը:

§ 7. Պետապի պատասխանատվությունը կնքված ապահովագրության վերաբերմամբ սկսվում է այն որվա ժամը 24-ից, յերբ Պետապին մուծվում է ապահովագրական վկայականում նշված ապահովագրական վճարումը:

§ 8. Կնքված ապահովագրության առթիվ Պետապն ապահովագրված անձին ապահովագրական վկայական է տալիս: Վկայականի վրա պետապը նշում է ապահովագրական վճարումն ստանալու մասին:

§ 9. Կատարելիք ապահովագրական վճարումների չափը վորոշվում է պետական ապահովագրության Գլխավոր Վարչության սահմանված տարիֆներով: Վճարման տարեկետում չի թույլատրվում:

§ 10. Ապահովագրությունը համարվում է չկայացած, յեթե ապահովագրվողը դիմում տալու և ապահովագրական վճարում կատարելու միջև ընկած ժամանակամիջոցում մահանում է կամ ծանր հիվանդանում, կամ ել հաշմանդամ է դառնում:

§ 11. Յեթե պարզվում է, վոր ապահո-

վազրվողը չէր կարող ապահովագրութեան ընդգրկվել այս կանոնների § 2-ում հիշատակված պատճառներով, ինչպես նաև յեթե ապահովագրութունը կնքելիս նա սխալ է ցույց տալիս իր հասակը կամ իր իսկական արհեստի փոխարեն ցույց է տալիս մի այլ արհեստ, վորի համար Պետապ ալիքի նվազ ապահովագրական վճարում է սահմանել, ապա Պետապն իրավունք ունի վերացնել ապահովագրութունը և մերժել ապահովագրական վկայականով վորեւ գումար վճարելը:

§ 12. Ժամկետը լրանալուց հետո ապահովագրութունը կարելի յէ նորոգել, յեթե նրա նորոգման պահին ապահովագրվողն այս կանոնների համաձայն կարող է ապահովագրութեան ընդունվել:

Ապահովագրութունը նորոգելիս նոր ապահովագրական վկայական է տրվում:

§ 13. Ապահովագրական գումարը ստանալու համար ապահովագրվողը կարող է նշանակել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավական անձի կամ անձանց, ինչպես

նաև ապահովագրական վկայական կրողի (предявитель):

Նման անձ ցույց չտալու դեպքում ապահովագրական գումարը վճարվում է որինական ժառանգներին:

§ 14. Ապահովագրութեան ժամկետի գործողութեան ընթացքում ապահովագրվողն իրավունք ունի ապահովագրական գումար ստանալու համար նշանակված անձին փոխարինել մի այլ անձով: Այդ անձին փոխարինելու մասին ապահովագրվողը պետք է գրավոր հայտնի Պետապին և ներկայացնի ապահովագրական վկայականը համապատասխան նշում անելու համար:

§ 15. Ապահովագրվողի հաշմանդամութեան աստիճանը, վոր դժբախտ դեպքից է առաջացել, վորոշում է բուժումից հետո եքսպերտ բժիշկը կամ բժշկական եքսպերտիզայի Բյուրոն Պետապի հրահանգի հիման վրա:

§ 16. Յեթե ապահովագրվողի աշխատունակութեան հնարավոր ալիւլացման կամ իջեցման պատճառով չի կարելի վորոշել

մշտական հաշմանդամության աստիճանը, ապա հաշմանդամության աստիճանի վերաբերյալ հարցի վերջնական լուծումը հետաձգվում է, բայց վոչ ավելի քան դրժբախտ դեպքի որվանից մեկ տարով:

Մինչև մշտական հաշմանդամության աստիճանի վերաբերյալ հարցի վերջնական լուծումը Պետապը վճարում է ապահովագրվողին ամսական թոշակ, տրվելիք գումարի 50%-ի չափով:

Հաշմանդամության աստիճանը վերջնականապես վորոշվելուց հետո, տրված թոշակը պահվում է Պետապի կողմից վճարվող գումարից:

§ 17. Ժամանակավոր թոշակ ստանալու համար ապահովագրվողին տրվում է թոշակի գրքույկ:

Թոշակը ստանալու համար ներկայացվում է թոշակի գրքույկը և վկայական ապահովագրվողի անձնության մասին, իսկ յեթե թոշակն ստանում է վոչ ապահովագրվողը, ապա թոշակի գրքույկում պետք

է ստորագրված և վավերացված լինեն վկայականն այն մասին, վոր ապահովագրվողը կենդանի յե և ապահովագրվողի համատարմագիրը:

§ 18. Պետապն իրավունք ունի բժշկական վերաքննության յենթարկելու այն ապահովագրվողի, վորը թոշակ է ստանում: Յեթե բժշկական վերաքննությամբ կպարզվի, վոր ապահովագրվողի աշխատունակությունն աճելացել է կամ լրիվ վերականգնվել, ապա թոշակի չափը համապատասխանորեն պակասեցվում է կամ բոլորովին դադարեցվում է այն: Պետապն իրավունք ունի դադարեցնել թոշակի հետագա վճարումները, յեթե ապահովագրվողը խույսկտա վերաքննությունից:

§ 19. Ապահովագրական գումար ստանալու համար Պետապին պետք է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.—

ա) ապահովագրական վկայական տվյալ ապահովագրության վերաբերյալ.

բ) զժբախտ դեպքի վերաբերյալ ակտի

կամ արձանագրության պատճենը կամ այն փոխարինող փաստաթուղթ, վորն ապացուցում է, թե իրոք ապահովագրվողի հետ դժբախտ դեպք է պատահել:

գ) ՁԱԳՍ-ի վկայականն ապահովագրվողի մահվան մասին, ցույց տալով մահանալու պատճառները:

դ) այն բժշկի վկայականը, վորը բժշկել է ապահովագրվողին նրա վերջին հիվանդության ժամանակ, յեղրակացությամբ մահվան կամ հաշմանդամության պատճառների մասին, յեթե ՁԱԳՍ-ի վկայականում չեն հիշատակված մահվան պատճառները, և այն բժշկի վկայականը, վորը հերձում է կատարել, յեթե այդպիսին կատարվել է: Բժիշկների ստորագրությունները պետք է պաշտոնապես վավերացված լինեն:

ե) ապահովագրական գումար ստացողի անձնագիրը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հիշյալ բոլոր փաստաթղթերն ապահովագրական գումար ստացողների ստորագրու-

թյամբ ֆուում են Պետապի գործերում, իսկ անձնագիրը հետ է վերադարձվում նրա տիրոջը:

Ապահովագվողի բռնի մահվան դեպքում պահանջվում է քննչական օրգանի տեղեկանքն այն մասին, վոր ապահովագրական գումար ստացողն ապահովագրվողի մահվան կապակցությամբ պատասխանատվության չէ կանչվում:

Այն դեպքում, յերբ ապահովագրական գումար ստանալու համար նշանակված անձն ապահովագրվողի մահվան վերքերյալ գործի կանակցությամբ քրեական պատասխանատվության է կանչվում, պետք է ներկայացնել դատարանի ուժի մեջ մտած դատավճռի կամ վորոշման վավերացված պատճենը հիշյալ անձի վերաբերմամբ քննությունը կարճելու մասին:

§ 20. Պետապն ապահովագրական գումար վճարում է վոչ ուշ, քան § 19-ում հիշատակված բոլոր փաստաթղթերն ստանալուց մեկ ամսվա ընթացքում:

§ 21. Յեթե ապահովագրական գումա ստանալու համար նշանակված անձի իրավունքի դեմ վորեւ մեկը կվիճի և այդ վեճը հարուցելու հանգամանքն ապացուցելու նպատակով համապատասխան տեղեկանք կներկայացվի Պետապին դատական կամ քննչական օրգաններից, ապա ապահովագրական գումարը կարելի չե վճարել վեճը լուծվելուց հետո միայն:

§ 22. Ապահովագրական գումար Պետապը վճարում և ըստ ապահովագրական գումար ստացողի բնակավայրի կամ փոխադրում և նրա ցույց տված հասցեյով:

23. Պահանջ ապահովագրական գումար ստանալու մասին պետք և առաջադրել Պետապի այն օրդանին, վորն ապահովագրական վկայական և տվել և վոչ ուշ, քան ապահովագրվողի հետ պատահած դժբախտ դեպքի օրվանից յերկու տարվա ընթացքում:

30
Այդ ժամկետից հետո առաջադրված պահանջները բավարարման յենթակա չեն:

ԽՍՀՄ ֆինոտդկամ Գ. ԳՐԻՆԿԻՆ

ԽՍՀՄ Պետապի Գլխավոր
Վարչության պետ՝ ԱՐԱՆՈՎ

9 ապրիլի 1937 թ. № 113



ՀՀ Ազգային գրադարան



NL0977692

43

17 СЕН. 1937

1

3788

П Р А В И Л А

**добровольного страхования жизни
от несчастных случаев.**